կողմերը, մնացեալ գաւառները լեռնային բարձրաւանդակներ էին, որոնք միայն տալիս էին ճոխ մարգեր խաշնարածութեան համար: Այս պատճառով բնակիչների գլխաւոր պարապմունքը անասնապահութիւնն էր:

Հայերը առաւելապէս բռնել էին այն տեղերը, ուր կարելի էր եւ վարուցանքով պարապել. իսկ այդ չէր կացուցանում նրանց ապրուստի գլխաւոր աղբիւրը, նրանք միեւնոյն ժամանակ եւ երկրագործ եւ հովիւներ էին: Ձմեռը անցուցանում էին նրանք գետնափոր խրճիթներում, իրանց գիւղերի մէջ, իսկ տարոայ մնացած ամիսները չադրներում, լեռների բարձրաւանդակների վրայ:

Այստեղ հայերի մի այսպիսի կիսա-չոական եւ կիսա-հաստատաբնակ կեցութիւնը տոել էր նրանց բնաւորութեանը երկակենցաղ կենդանիների յատկութիւններ: Նրանց գետնափոր խրճիթներն, իրենց ստորերկրեայ ոլորմոլոր խորշերով, աւելի նման էին սողունների որջին, եւ դա մտցրել էր բնակիչների մէջ օձի նենգութիւնը եւ նրա ոխերիմ չարամտութիւնը. նա պատրաստ էր խայթել, եթէ յարմար միջոց գտնէր: Նրանց հովոական չադրները, կազմոած լեռների բարձրաւանդակների վրայ, բազմագոչ ջրվէժների մօտ, շրջապատած հսկայական ժայռերով, որոտի եւ կայծակի ահեղ սպառնալեաց ներքոյ, — տոել էին նրանց բնաւորութեանը աւելի կիսավայրենի եւ կիսագազանային յատկութիւններ:

Հովոական կեանքը իր նահապետական պարզութեան հետ ունի եւ իր վայրենի կատաղութիւնը: Մշակական կեանքը իր աշխատասէր հոգու հետ պահպանում է թուլասրտութիւն եւ երկչոտութիւն:

Հայը իր հայրենի լեռների թէեւ հարազատ, բայց փչացած որդին էր: Քուրդը նրա մտերիմ որդեգիրն էր: Հայը ոչ կատարեալ, երկրագործ էր եւ ոչ կատարեալ հովիւ: Քուրդը հաւատարիմ էր մնացել իր պարապմունքին. նա հոգով եւ սրտով հովիւ էր, այդ բառի բուն նշանակութեամբ: Այս պատճառով նա տիրում էր:

Հովիւները միշտ տիրում են, որպէս իրանց հօտերին, նոյնպէս եւ մերձաւոր ժողովուրդներին: Մարդկութեան առաջին տիրապետողները եղել են հովիւները: Մեր Հայկ նահապետը նոյնպէս մի քաջ հովիւ էր:

Տարօնի եւ Վասպուրականի հայը եւ հովիւ էր եւ երկրագործ. նա վարում էր որպէս չոական, նոյնպէս եւ հաստատաբնակ կեանք: Իր գիւղում, գետնափոր խրճիթների մէջ նա ապրում էր որպէս գազանը իր որջում. իր արտերի մէջ նա զինոորոած էր բահով եւ մանգաղով. իր լեռների արօտներում նա զինոորոած էր հրացանով եւ թրով: Այսպիսի երկակենցաղ ապրուս-